թէ բազումք գլխաւորք պարսից զզուեալք են ի թահմազ գուլէն։ Եւ յայլուստ լսեմք թէ զհալէպ պաշարեալ է...։.. այժմ ժանտացան անօսրացաւ։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Ցամի տեառն 1743
Նոյեմբերի 22
[Կ. Պոլիս]

Ցետ որոյ եգերեցի զգիրս այս և ծալլէի, հրացանք արձակեցան յերից տեղեաց, և թէ զինչ է պատճառն, ել ձայն թէ զպարսիկս կոտորեալ են սոքա, և թէ այլ որպիսի կերպիւ և մասնաւորապէս զինչ արարեալ են սոքա ոչ գիտեմք...։

ՃԻԷ.

Հայ բարձրաստիճան եկեղեցականներու դասէն ումանց տեղափոխութիւնը կը տեղեկացնուի հետեւեալ գրոյն մէջ։

Գերարգելոյ տեառն Միխիթարայ Աբբայ հօրն իմոյ որդիական յարգուրեամբ ողջոյն

... Նախնէ լվեալ էի այդ եպիսկոպոսին տեղդ գալն և զաղքատութենէ նորին, բայց ոչ միուս հայերուն որ նորապէս եկեալ են... երկու ստամպօլցի եպիսկոպոսք եկեալ են Լիվօրնա, և ընդ նոցա կուռճի տէր գափրելն, մէկին անունն մէսրօպ և միուսն աթանաս, մինն ի սոցանէ ժամանակ ինչ վանքն կացեր է և յաժմս յոյժ աղքատութեամբ հասեր են տեղն... կամք ունին Հռոմ գալու...։

Նաև եկեալ իսկ է տեղս մըսըրտամու ոմն քահանայ յոհաննէս վարդապետ կոչեցեալ. ինքն Կեսարու գեղն է և աշակերտ Սէրքիս եպիսկոպոսին որ էր Էնկուրու առաջնորդ. այս անձս տեղեակ իսկ է ուղղափառութեան բայց ոչ ուղղաբարապէս վարկեալ է, վասն որոյ յատկապէս Հռոմ եկեալ է առ ի դաւանութիւն տալ և տնորինումն առնելոյ։ Փոքր ինչ ինձ յայտնեաց իւր դիտմունքն, զի ետ զատկին կամի Վենէտիկ գալ առ ի կրօնաւոր լինիլ ընդ Հայրութեան ձերում (որպէս յուսադրեալ է զինքն տէր ստէփանն), բայց ես այս բանիս դժվարութիւնն փոքր ինչ պարզաբանեցի իւրեան. տարօք 28 ամաց է։

Երկու ամիս կայ որ դրապզընու ղազար եպիսկոպոսն տեղիս սուրբ ժողովին դաւանութեան գիր է յղեալ....։

Նախ քան զպատրիարքին գնալն լուաք թէ մխլայիմ օղլուն Նափոլի տեսած են...։

Անարժան որդի և ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743 նոյեմբերի 23
[ի Հռովմ]

ՃԻԸ.

Ինչպէս նախորդ վաւերաթուղթերուն մէջ տեսանք, հետեւեալ գիրն ալ կը պարունակէ նորագոյն մանրամասնութիւններ՝ նոյն ժամանակի ազգային եկեղեցական ձեռնադրութեանց մէջ մերթ տեղի ունեցած անորոշութեանց ու խառնակութեանց շուրջ, որոնք Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ դժբախտ շրջան մը կազմած են։

Մեր նամակագիրը առ Մխիթար կը ծանուցանէ նաեւ Պետրոս Պատրիարքէն հասած նոր լուր մը։